ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
«ԶԱՐԻՇԱՏ (ԱՐԱՄ) ՄԱՐՏԻՆԻ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ԲԺՇԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ»
ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ք. Արմավիր, Շահումյան 3
☏ (0-237) 2-35-60
E-mail: armavir.med@gmail.com

08-592/736 «21» հունիսի 2024թ.

«Հովսեփյան» ՍՊԸ-ի տնօրեն
պարոն Արամ Հովսեփյանին

ԾԱՆՈՒՑՈՒՄ
պայմանագրի միակողմանի լուծման մասին

Հարգելի պարոն Հովսեփյան

Համաձայն իրավաբանական անձանց պետական ռեգիստրի պետական միասնական գրանցամատյանի տվյալների Ձեր և 12.11.2022թ. մինչև 12.11.2024թ. ժամանակահատվածում գնումների գործընթացներին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկված «Հայկարլի» ՍՊԸ-ի միջև առկա է փոխկապակցվածություն, որը հանդիսանում է գնումների գործընթացին մասնակցության իրավունքի սահմանափակում:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 33-րդ կետի 8-րդ ենթակետի պահանջները, այն է. «Երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, պայմանագրի կողմը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար»՝ «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի և Ձեր ընկերության միջև 2024թ. մարտի 13-ին կնքված ՈՁՄՄԱԲԿ-ԳՀԱՊՁԲ-21/24-4 պայմանագիրը 2024թ. հունիսի 21-ից կհամարվի միակողմանի ամբողջությամբ լուծված:

Առաջարկում եմ 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ-ի ԱրարատԲանկ ԲԲԸ-ում ունեցած 1510040627260100 հաշվեհամարին փոխանցել պայմանագրի կատարման և որակավորման ապահովման գումարները՝ համապատասխանաբար 136078 և 204117 ՀՀ դրամ:

Տեղեկացնում եմ նաև, որ եթե մինչև 2024թ. հուլիսի 1-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի պայմանագրի կատարման 136078 ՀՀ դրամը և որակավորման ապահովման 204117 ՀՀ դրամը և վճարումը հաստատող փաստաթղթերը ներկայացվի «Զարիշատ (Արամ) Մարտինի Մկրտչյանի անվան Արմավիրի ԲԿ» ՓԲԸ, ապա Ձեր Ընկերությունը չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տնօրեն՝ Հ. Հովհաննիսյան